

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԵՐԳԵՅԻ ՍԱՐՅԱՆ— *Հայկական ՍՍՌ ժողովրդական նկարիչ։ Ծնվել է 1880 թվին Դոնի Նախիջևանում։*

1903 թ. ավարտում է Մոսկվայի Նկարչության, քանդակագործության և ճարտարապետության դպրոցը։

Մ. Սարյանի գործերը ցուցադրվել են Մոսկվայում, Լենինգրադում, ինչպես նաև արտասահմանում՝ Վիեննայում, Հռոմում, Լոնդոնում, Փարիզում, Նյու-Յորքում և այլ քաղաքներում։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո Սարյանը տեղափոխվում է Երևան։

Տասնյակ տարիների բեղմնավոր վաստակի համար Հայաստանի կառավարությունը նրան շնորհում է ժողովրդական նկարչի կոչում։

Մարտիրոս Սարյանի անվան հետ է կապված մեր նկարչության զարգացման սովետական շրջանը։ Նա աճեցրել է բազմաթիվ նկարիչ կադրեր։

Մարտիրոս Սերգեյի Սարյանը գրանցված է դեպուտատության թեկնածու Ազգությունների Սովետի Երևանի Կիրովյան *№ 129* ընտրական օկրուգում:

ԻՎԱՆ ՎԱՍԻԼԻ ԵՂԻԱԶԱՐՈՎ—*Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ։ Ծնվել է 1893 թվին Թբիլիսիում։*

Բարձրագույն ուսումն ստացել է Պետերբուրգի էլեկտրո-տեխնիկական ինստիտուտում։

Ընկեր Եղիազարովը ակտիվ մասնակցություն է ունեցել ՍՍՌՄ էլեկտրոֆիկացման գլխավոր պլանը կազմելու աշխատանքներին, Ստալինյան հնգամյակների ընթացքում կառուցված մեր համարյա բոլոր աչքի ընկնող հիդրոկայանների շինարարության աշխատանքներին։

Նրա տեխնիկական ղեկավարությամբ է իրականացվում Սևան-Զանգու կասկադի հսկա էլեկտրոկայանների կառուցումը։

1940 թ. գլխավորում է ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի հիդրո-էներգետիկայի հանձնաժողովի աշխատանքները, իսկ 1944 թվից Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Ջրաէներգետիկ ինստիտուտը։

Ակադեմիկոս Եղիազարովն ունի 52 տպագրված գիտական աշխատություն։

Իվան Վասիլի Եղիազարովը գրանցված է դեպուտատության թեկնածու Ազգությունների Սովետի Երևանի Մոլոտովյան *№ 127* ընտրական օկրուգում:

ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ—*Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետի Նախագահի տեղակալ, Երևանի Քաղաքային Սովետի Գործկոմի նախագահ։ Ծնվել է 1896 թվին Գյանջա քաղաքում (այժմ Կիրովաբադ, Ադրբեջանական ՍՍՌ)։*

Աշխատել է Ադրբեջանի պարտիայի Կենտկոմում, ապա եղել է պարտիայի Կիրովաբադի Քաղկոմի քարտուղար։

1926 թվից աշխատում է Հայաստանում սկզբում Երևանի Քաղաքային Գործադիր Կոմիտեում, հետագայում՝ Քաղաքային Սովետում, Հայպետշինում և այլն։ Երեք տարի եղել է «Արարատ» գործարանի դիրեկտոր։

1937 թ. ընտրվում է Երևանի Քաղաքային Սովետի նախագահ։ Նույն թվին ընտրվում է Ազգությունների Սովետի դեպուտատ։

1939 թ. ընկ. Հովսեփյանը նշանակվում է Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետի նախագահի տեղակալ, հետո նաև Անտառարդյունաբերության ժողկոմ։

1945 թ. նորից անցնում է Քաղսովետի նախագահի պարտականությունների կատարմանը։

Լևոն Գրիգորի Հովսեփյանը գրանցված է դեպուտատության թեկնածու Ազգությունների Սովետի Երևանի Սպանդարյան ռայոնի *№ 128* ընտրական օկրուգում: